ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

ք. Երևան «14» նոյեմբերի 2019 թ.

Հ Ր Ա Մ Ա Ն № 40-Ա/Ք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԵՎ ԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻ ՀԵՏ ՀԱՄԱՏԵՂ ԱՆՑԿԱՑՎՈՂ ԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԶՄԱԿՈՂՄ ԾՐԱԳՐԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԻ ՀՐԱՎԵՐԻ ՓԱԹԵԹԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Առաջնորդվելով 2018թ. մարտի 23-ի «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 12-րդ կետով և հիմք ընդունելով

Հ Ր Ա Մ Ա Յ Ու Մ ԵՄ՝

1. Հաստատել Գիտական հետազոտությունների աջակցության եվրասիական ասոցիացիայի հետ համատեղ անցկացվող գիտական հետազոտությունների բազմակողմ ծրագրերի աջակցության միջազգային մրցույթի հրավերի փաթեթը՝ համաձայն Հավելվածի**:**

2. ՀՀ գիտության կոմիտեի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնին (պետի պաշտոնակատար՝ Շուշանիկ Աղաբեկյանին)՝ ապահովել մրցույթի հրավերի փաթեթի զետեղումը ՀՀ գիտության կոմիտեի ինտերնետային կայքում:

3. ՀՀ գիտության կոմիտեի գիտական գործունեության կազմակերպման վարչությանը (պետ՝ Ռուզան Ասատրյան)՝

1) մրցույթի հայտ ներկայացնող մասնակիցների համար կազմակերպել խորհրդատվություն,

2) ապահովել մրցույթի հայտերի գիտական փորձաքննության կազմակերպումը:

4. ՀՀ գիտության կոմիտեի ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման բաժնին (պետ՝ Տիգրան Գալստյան)՝ ապահովել հայտերի գիտական փորձաքննությունն իրականացնելու համար անհրաժեշտ միջոցների սահմանված կարգով տրամադրումը:
5. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել ՀՀ գիտության կոմիտեի գլխավոր քարտուղար Լևոն Մարդոյանին:

ՍԱՄՎԵԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված
ՀՀ ԳԿ նախագահի
2019 թ. նոյեմբերի 14-ի
թիվ 40-Ա/Ք հրամանի

ՀՐԱՎԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԵՎ ԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻ ՀԵՏ ՀԱՄԱՏԵՂ ԱՆՑԿԱՑՎՈՂ ԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԶՄԱԿՈՂՄ ԾՐԱԳՐԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹԻ

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեն **(**այսուհետ՝ Կոմիտե**)** և Գիտական հետազոտությունների աջակցության եվրասիական ասոցիացիան **(**այսուհետ՝ Ասոցիացիա) համատեղ անցկացնում են Գիտական հետազոտությունների բազմակողմ ծրագրերի **(**այսուհետ՝ Ծրագիր**)** աջակցության մրցույթ **(**այսուհետ՝ Մրցույթ)՝ համաձայն 2016 թվականի հուլիսի 1-ին ստորագրված «Գիտական հետազոտությունների աջակցության եվրասիական ասոցիացիա ստեղծելու մասին» մտադրությունների հուշագրի դրույթների:

1.2. Ծրագրի շրջանակներում 24 կամ 36 ամիս տևողությամբ դրամաշնորհներ կտրամադրվեն

- «*Կենսաբազմազանություն և կենսաանվտանգ միացություններ*»,
- *«Միջգիտակարգային հետազոտություններ՝ ուղղված պատմամշակութային հուշարձանների ուսումնասիրությանը, պահպանմանն ու վերականգնմանը»*

գիտական ուղղություններով ծրագրերի իրականացման համար՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի «Միջազգային գիտական համագործակցություն» ծախսային ենթածրագրի միջոցների հաշվին:

1.3. Մրցույթին մասնակցության գիտական նախագծերի հայաստանյան ազգային հայտերը (այսուհետ՝ Հայտ) ներկայացվում են Կոմիտե՝ հայաստանյան խմբերի ղեկավարների կողմից (այսուհետ՝ Ղեկավար): Ընդհանուր հայտը ձևավորվում է հայաստանյան և «Գիտական հետազոտությունների աջակցության եվրասիական ասոցիացիա ստեղծելու մասին» մտադրությունների հուշագրի կողմ հանդիսացող առնվազն երկու այլ երկրներ

(Ռուսաստանի Դաշնություն, Բելառուսի Հանրապետություն, Ուզբեկստանի Հանրապետություն, Վիետնամի Սոցիալիստական Հանրապետություն և Մոնղոլիա) ներկայացնող խմբերի կողմից ձևավորված կոնսորցիումի ղեկավարի կողմից:

1.4. Հայտը չի քննարկվում, եթե՝

- բովանդակությամբ համընկնում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ֆինանսավորվող կամ ֆինանսավորված որևէ թեմայի կամ ծրագրի հետ,
- նախագծի հեղինակի կողմից նախկինում իրականացված թեմայի/ծրագրի վերաբերյալ հաշվետվություն (այսուհետ՝ Հաշվետվություն) չի ներկայացվել կամ վերջինիս վերաբերյալ մասնագիտական փորձագիտական խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) կողմից տրվել է բացասական եզրակացություն,
- միաժամանակ ներկայացված է Կոմիտեի կողմից անցկացվող այլ մրցույթների,

1.5. Հեղինակային իրավունքի օբյեկտ հանդիսացող նյութեր պարունակող Հայտ և այնուհետև Հաշվետվություն ներկայացնելու դեպքում Ղեկավարը պետք է գործի «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դրույթներին համապատասխան: Հեղինակային իրավունքի կամ հարակից իրավունքների իրավատերն իր իրավունքները պաշտպանելու նպատակով կարող է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով դիմել դատարան:

1.6. Ծրագրի շրջանակներում համատեղ ստացած գիտական արդյունքի նկատմամբ հեղինակային իրավունքի շուրջ ծագած վեճերը ծրագրին մասնակից խմբերի ղեկավարները պետք է լուծեն խորհրդակցությունների և քննարկումների միջոցով:

1.7. Ծրագրի շրջանակներում համատեղ հետազոտության արդյունքները հրապարակելիս անհրաժեշտ է նշել Կոմիտեի կողմից ստացած աջակցության մասին.

Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԳԿ-ի կողմից--------- ծածկագրով բազմակողմ գիտական ծրագրին տրամադրված ֆինանսական աջակցության միջոցների շրջանակներում:

Исследование выполнено при финансовой поддержке КН РА в рамках многосторонней научной программы ----------

This work was supported by the RA State Committee of Science in the frames of the multilateral research project ----------.

1.8. Ծրագրի իրականացման ընթացքում Կոմիտե է ներկայացվում ընթացիկ (տարեկան), իսկ ավարտից հետո՝ ամփոփիչ Հաշվետվություն, որոնք ենթարկվում են գիտական փորձաքննության:

1.9. Ծրագրի ֆինանսավորումը դադարեցվում է ընթացիկ Հաշվետվությունը սահմանված ժամկետում չներկայացնելու կամ վերջինիս վերաբերյալ Խորհրդի գիտական փորձաքննության բացասական եզրակացության հիման վրա:

1.10. Կոմիտեն կարող է ֆինանսավորման երաշխավորված Ծրագրի և Հաշվետվության անոտացիաները հրապարակել տպագիր կամ էլեկտրոնային եղանակով:

2. Մասնակիցներին ներկայացվող պահանջները

2.1. Հայաստանյան խմբի բոլոր անդամները պետք է հանդիսանան Հայաստանի Հանրապետության մշտական բնակիչներ, ինչպես նաև Ծրագրի կատարման ընթացքում բնակվեն Հայաստանի Հանրապետությունում:

2.2. Հայաստանյան խմբում կարող են ընդգրկվել **6-ից 8** կատարողներ՝ ներառյալ Ղեկավարը:

2.3. Նախագծի հայաստանյան խմբում կարող են ընդգրկվել գիտական և գիտատեխնիկական գործունեություն իրականացնող պետական կազմակերպություններում և բուհերում ներգրավված գիտաշխատողները և դասախոսները, առկա և հեռակա ուսուցման ասպիրանտները, մագիստրանտները և մագիստրոսի աստիճան ունեցող անձինք:

2.4. Մրցույթին չեն կարող մասնակցել Կոմիտեի կողմից ֆինանսավորվող միաժամանակ երկու մրցութային (այդ թվում՝ միջազգային) թեմաների (ծրագրերի) ղեկավարները կամ կատարողները (բացառությամբ անհատական խրախուսման մրցույթների շահառուների), եթե այդ թեմաները (ծրագրերը) չեն ավարտվում մինչև սույն Մրցույթի արդյունքում երաշխավորված Ծրագրերի ֆինանսավորման սկիզբը:

2.5. Խմբի ղեկավար կարող է լինել գիտական աստիճան ունեցող մինչև 70 տարեկան անձը (ում 70 տարին չի լրացել մինչև Հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալու օրը) և որն ունի առնվազն 5 (հինգ) տարվա գիտական կամ գիտամանկավարժական գործունեության ստաժ և վերջին 5 (հինգ) տարիների ընթացքում միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում (Scopus, Thomson Reuters և այլն), ինչպես նաև

վերջին հինգ տարիների ընթացքում միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության Բարձրագույն որակավորման կոմիտեի ցանկում ընդգրկված գրախոսվող ամսագրերում հրատարակված առնվազն 5 հոդված կամ 2՝ առնվազն հինգ տպագրական մամուլ ծավալով, գիտական կազմակերպության կամ բարձրագույն ուսումնական հաստատության (այսուհետ՝ Կազմակերպություն) գիտական խորհրդի երաշխավորություն ունեցող և ISBN նշումով հրապարակում (մենագրություն): 1 մենագրությունը համարժեք է գրախոսվող ամսագրերում հրապարակված 3 հոդվածի:

2.6. Խմբի անդամները (ներառյալ ղեկավարը) չեն կարող ընդգրկվել Մրցույթին ներկայացված մեկից ավելի Հայտերում:

2.7. Խմբում պետք է ընդգրկվի մինչև 35 տարեկան առնվազն մեկ գիտաշխատող կամ ասպիրանտ, մագիստրոս կամ մագիստրատուրայի ուսանող:

2.8. Հայաստանյան և կոնսորցիումի մյուս հայտատուները միմյանց հետ համաձայնեցնում են ներկայացվող նախագծի բովանդակությունը, որը կարող է տարբեր լինել՝ կախված կողմերի առջև դրված խնդիրներից, սակայն ներկայացված նախագծի վերնագրերը պետք է ամբողջությամբ համընկնեն: Վերջնականապես ձևավորված և համաձայնեցված Հայտը հայաստանյան կողմը ներկայացնում է Կոմիտե:

2.9. Կոնսորցիումի յուրաքանչյուր խմբի ղեկավար ազգային հայտը ներկայացնում է համապատասխան ֆինանսավորող կառույց՝ վերջիններիս կողմից սահմանված պայմանների և ժամկետի համաձայն: Եթե որևիցե կողմ սահմանված ժամկետում համապատասխան ֆինանսավորող կառույց չի ներկայացրել ազգային հայտը, ապա ընդհանուր հայտը ենթակա չէ քննարկման:

2.10. Սույն Մրցույթի շրջանակում չեն կարող քննարկվել այն նախագծերի Հայտերը, որոնք՝

- Կոմիտե կամ Ասոցիացիա ստացվել են Հայտերի ընդունման համար հայտարարված ժամկետներից ուշ,
- լրացվել են ոչ ըստ Հայտին ներկայացվող պահանջների,

2.11. Հայտի համապատասխանությունը վերը նշված պայմաններին երաշխավորում է Ղեկավարը:

3. Հայտ ներկայացնելը

3.1. Կոնսորցիումի յուրաքանչյուր խմբի ղեկավար համապատասխան ֆինանսավորող կառույց է ներկայացնում ազգային հայտը՝ համաձայն տվյալ կառույցի կողմից սահմանված կարգի և ժամկետի:

3.2. Ծրագրի ընդհանուր հայտը կոնսորցիումի ղեկավարի կողմից ներկայացվում է Ասոցիացիայի քարտուղարություն՝ համաձայն Մրցույթի ընդհանուր հրավերով սահմանված դրույթների և ժամկետների:

Ուշադրություն. **«Գիտական հետազոտությունների բազմակողմ ծրագրերի աջակցության մրցույթի» ընդհանուր հայտի ներկայացման կարգի, հայտին ներկայացվող պահանջների և հայտի ներկայացման վերջնաժամկետի մասին տեղեկատվություն կարելի է ստանալ** http://eapi-science.org **կայքէջից:**

3.3. Հայաստանյան ազգային հայտը (Հավելված N 1) լրացնում և ներկայացնում է Ղեկավարը:

3.4. Կոմիտե ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը.

- Ղեկավարի դիմումը (Հավելված N 2),
- Հայտը,
- Գիտական կազմակերպության կամ բարձրագույն ուսումնական հաստատության (այսուհետ՝ Կազմակերպություն) գիտական (գիտատեխնիկական) խորհրդի որոշումը,
- մինչև 35 տարեկան մասնակցի անձնագրի և վերջին դիպլոմի պատճենները, ասպիրանտ կամ մագիստրանտ հանդիսանալու դեպքում՝ համապատասխան տեղեկանքը, որտեղ նշված են մասնագիտությունը և ուսուցման տարին:

3.5. Պահանջվող փաստաթղթերը Կոմիտե են ներկայացվում առձեռն՝ աշխատանքային օրերին ժամը 10:00-13:00 և 14:00-17:00 (Օրբելի եղբայրների 22, 7-րդ հարկ, 708 սենյակ) կամ փոստով (Երևան 0028, Օրբելի եղբայրների 22)՝ մինչև 2020 թվականի **հունվարի 27-ը** ներառյալ:

4. Նախագծերի գիտական փորձաքննությունը

4.1. Հայտերի փորձաքննությունը յուրաքանչյուր կողմն անցկացնում է ինքնուրույն:

4.2. Հայաստանյան կողմում մրցույթի տեխնիկական պահանջները բավարարող Հայտերը տրամադրվում են Խորհրդին՝ Կոմիտեի փորձագետների շտեմարանում ընդգրկված փորձագետների ներգրավմամբ գիտական փորձաքննություն իրականացնելու համար:

4.3. Գիտական փորձաքննության ժամանակ գնահատվում են Ծրագրի գիտական կամ գիտատեխնիկական նորույթը և արդիականությունը, իրականացման նախադրյալները, Ղեկավարի և կատարողների ձեռքբերումները գիտության տվյալ բնագավառում, նրանց մասնագիտական որակավորման համապատասխանությունը նախատեսված հետազոտությունների իրականացմանը, աշխատանքի ծավալի, իրականացման ժամկետների և նախահաշվի հիմնավորվածությունը, միջազգային համագործակցության մակարդակը, գիտության տվյալ բնագավառի առանձնահատկություններից բխող այլ հարցեր:

4.4. Հայտը գիտական փորձաքննության է ենթարկվում երկու փորձագետների կողմից: Յուրաքանչյուր Հայտի համար փորձագետը լրացնում է գիտական փորձաքննության գնահատման թերթիկը (Հավելված N 3):

4.5. Հայտի բովանդակության, գիտական փորձաքննության ընթացքի վերաբերյալ տեղեկությունների տրամադրումն այլ անձանց արգելվում է՝ համաձայն «Գիտական և գիտատեխնիկական փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի:

4.6. Փորձագետի գնահատականը կազմում է գնահատման սանդղակի առավելագույն միավորի 85 տոկոսը:

4.7. Հայաստանյան և կոնսոցիումի ղեկավարների, ինչպես նաև հայաստանյան կատարողների մասնագիտական որակավորումը գնահատվում է Խորհրդի կողմից: Խորհրդի գնահատականը կազմում է գնահատման սանդղակի առավելագույն միավորի 15 տոկոսը: Գնահատելիս Խորհուրդն առաջնորդվում է Գիտական գործունեության արդյունավետության ցուցանիշի որոշման մեթոդաբանությամբ (Հավելված N 4):

4.8. Հայտի գիտական փորձաքննության վերջնական գնահատականը երկու փորձագետների գնահատականների միջին թվաբանականի և Խորհրդի գնահատականի գումարն է:

4.9. Երկու փորձագետների գնահատականները 35 և ավելի միավորներով տարբերվելու դեպքում Հայտը տրվում է երրորդ փորձագետին: Այդ դեպքում, գիտական

փորձաքննության վերջնական գնահատականը երեք փորձագետների երկու իրար մոտ գնահատականների միջին թվաբանականն է, իսկ հավասար տարբերությունների դեպքում գիտական փորձաքննության վերջնական գնահատականը երկու առավելագույն գնահատականների միջին թվաբանականն է:

4.10. Ֆինանսավորման երաշխավորված ծրագրերի ընդհանուր քանակը որոշվում է՝ հիմնվելով երկու կողմերի փորձաքննության արդյունքների վրա և ելնելով Մրցույթի համար նախատեսված յուրաքանչյուր կողմի ֆինանսական հնարավորություններից:

Ուշադրություն. Ֆինանսավորող կառույցների կողմից որևէ հայտի ֆինանսական աջակցություն հատկացնելուց հրաժարվելու դեպքում՝ Կոմիտեն չի կարող քննարկել տվյալ ծրագրի ֆինանսավորման հարցը:

4.11. Սույն Մրցույթի շրջանակներում արդյունքների բողոքարկման փուլ նախատեսված չէ:

4.12. Կոմիտեն յուրաքանչյուր Ղեկավարին տրամադրում է գիտական փորձաքննության արդյունքները:

4.13. Կոմիտեն Կազմակերպության ղեկավարին տրամադրում է Կազմակերպությունից ներկայացված և ֆինանսավորման երաշխավորված Ծրագրերի ցանկը, ղեկավարների ցուցակը և յուրաքանչյուր Ծրագրի կատարման համար նախատեսված ֆինանսավորման ծավալը:

5. Այլ դրույթներ

5.1. Սույն Մրցույթի արդյուքները կամփոփվեն **2020 թվականի 2-րդ եռամսյակում**:

5.2. Ֆինանսավորման երաշխավորված Ծրագրի ղեկավարի և կատարողների միջև, ինչպես նաև Կազմակերպության ղեկավարի և Ծրագրի ղեկավարի միջև Հայաստանի Հանրապետության «Քաղաքացիական օրենսգրքով» սահմանված կարգով կնքվում են պայմանագրեր:

5.3. Կոմիտեի և ֆինանսավորման երաշխավորված Ծրագրի ղեկավարի միջև Հայաստանի Հանրապետության «Քաղաքացիական օրենսգրքով» սահմանված կարգով կնքվում է պայմանագիր 5.2 կետում նշված պայմանագրերի առկայության դեպքում:

5.4. Կողմերից յուրաքանչյուրը ֆինանսավորում է իր կողմի գիտական խմբի աշխատանքների հետ կապված ծախսերը:

5.5.Հայաստանյան գիտական խմբի տարեկան ֆինանսավորման առավելագույն ծավալները կազմում են **5750,0, 6875,0** և **8000,0** հազար ՀՀ դրամ՝ համապատասխանաբար 6, 7 և 8 անձից բաղկացած գիտական խմբերի համար:

5.6. Աշխատանքի վարձատրության համար հատկացված առավելագույն տարեկան գումարը չպետք է գերազանցի **5040,0, 5880,0** և **6720,0** հազար ՀՀ դրամը՝ համապատասխանաբար 6, 7 և 8 անձից բաղկացած գիտական խմբերի համար:

5.7. Եթե աշխատանքի վարձատրության համար նախատեսվում է վերոնշյալ ծավալներից պակաս գումար, ապա տարբերությունը կարելի է օգտագործել Նախահաշվի «Այլ ծախսեր» հոդվածում:

5.8. Նախահաշվի «Այլ ծախսեր» հոդվածով կարող են նախատեսվել հետազոտական սարքավորումների և գիտական հետազոտությունների ընթացքում օգտագործվող նյութերի ձեռքբերման, կամ աշխատանքների և ծառայությունների ծախսեր: 150,0 հազար ՀՀ դրամը գերազանցող գնի սարքավորման կամ ծառայության անհրաժեշտությունը հիմնավորել Նախահաշվի մեկնաբանության մեջ:

5.9 Գործուղումների համար նախատեսվող գումարը կարող է օգտագործվել համագործակցող կազմակերպություններ այցելության, Հայաստանի Հանրապետությունում դաշտային հետազոտություններ իրականացնելու և ծրագրի ընթացքի ու արդյունքների ներկայացման նպատակով տեղական և միջազգային գիտաժողովներին մասնակցության համար: Օտարերկրյա այցելությունները պետք է նախատեսվեն առնվազն 3 օր տևողությամբ:

5.10 Մինչև երկու շաբաթ տևողությամբ գործուղումների համար օրապահիկը և գիշերավարձը անհրաժեշտ է հաշվարկել ըստ Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմամբ սահմանված ծախսերի չափերի: Երկու շաբաթը գերազանցող գործուղումների համար Խմբի անդամները կարող են հայցել ամսական մինչև 1500,0 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ: Խմբի յուրաքանչյուր անդամի օտարերկրյա գործուղումների ընդհանուր ժամանակը չպետք է գերազանցի երկու ամիսը (12-ամսյա կտրվածքով):

5.11.Վերադիր ծախսերը չպետք է գերազանցեն «Այլ ծախսեր» հոդվածով յուրաքանչյուր տարվա համար նախատեսված գումարի 7 տոկոսը:

5.12 Խմբի ղեկավարի 2 ամիս (60 օր) Հայաստանի Հանրապետությունից անընդհատ բացակայության դեպքում Թեմայի ֆինանսավորումը դադարեցվում է: Խմբի անդամի 2

ամիս (60 օր) Հայաստանի Հանրապետությունից անընդհատ բացակայության դեպքում Խմբի ղեկավարը նախօրոք (10-օրյա ժամկետում) պետք է դիմի Կոմիտե՝ գիտական գործունեության արդյունավետության և տարիքային խմբի համարժեք փոփոխություն կատարելու կամ Խմբի անդամների թիվը կրճատելու առաջարկությամբ: Խմբի անդամների թվի կրճատման դեպքում Խմբի ղեկավարի և Կոմիտեի միջև կնքվում է պայմանագրի գնի փոփոխության մասին համաձայնագիր:

Հավելված N 1
Ձև 1

ՀԱՅՏ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԵՎ ԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻ ՀԵՏ ՀԱՄԱՏԵՂ ԱՆՑԿԱՑՎՈՂ ԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԶՄԱԿՈՂՄ ԾՐԱԳՐԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ

Տ Ի Տ Ղ Ո Ս Ա Թ Ե Ր Թ

1. Ընդհանուր հայտի՝ Ասոցիացիայի քարտուղարություն հանձման ամսաթիվը և ծածկագիրը
2. Հայտի վերնագիրը, բնագավառը և մասնագիտական դասիչը
3. Հուշող (բանալի) բառեր
4. Նախագծի կատարման համար անհրաժեշտ ժամանակահատվածը
5. Գիտական խմբի (ներառյալ Ղեկավարը) անդամների թիվը
6. Կոնսորցիումի անդամ կազմակերպությունների թիվը
7. Կոնսորցիումի անդամ խմբերի մասնակիցների (ներառյալ ղեկավարները) թիվը
8. Աշխատանքի վարձատրության (ներառյալ եկամտային հարկը) գումարը
9. Այլ ծախսերի գումարը
10. Վերադիր ծախսերի գումարը
11. Հայցվող ընդհանուր գումարը

Ղեկավարի ստորագրությունը _____

Կազմակերպության ղեկավարի ստորագրությունը _____

«____» _____ 20--- թ.

ՆԱԽԱԳԾԻ ԱՆՈՏԱՑԻԱ

Համառոտ ներկայացնել նախագծի նպատակներն ու խնդիրները՝ հայերեն, անգլերեն և ռուսերեն:

ՆԱԽԱԳԻԾ

Ներկայացնել հայերեն և անգլերեն, յուրաքանչյուրը մինչև 12 էջ՝ ներառյալ գրաֆիկները, գծագրերը, լուսանկարները և գրականության ցանկը.

1. *խնդրի դրվածքը, դրա արդի վիճակը, ծրագրի գիտական նպատակները, հետազոտական ծրագիրը, իրականացման եղանակները, առկա և անհրաժեշտ նյութական ռեսուրսները (մինչև 8 էջ),*
2. *տվյալ ուղղությամբ Խմբի ունեցած ձեռքբերումները և ակնկալվող արդյունքները (մինչև 2 էջ),*
3. *կոնսորցիումի մասնակից խմբերի կողմից լուծվելիք խնդիրները (մինչև 2 էջ),*
4. *օգտագործված գրականության ցանկը:*

Ձև 2

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԽՄԲԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՄԱՍԻՆ

1. Ղեկավարի ազգանունը, անունը, հայրանունը (հայերեն, անգլերեն, ռուսերեն)
2. Ծննդյան տարեթիվն ու ծննդավայրը
3. Կրթությունը (բուհ, մասնագիտություն)
4. Գիտական աստիճանը
5. Վերջին թեզի վերնագիրը, մասնագիտական դասիչը, պաշտպանության տարեթիվը և վայրը
6. Աշխատանքի վայրը, պաշտոնը
7. Հեռախոսը (աշխատանքային, բջջային)
8. Էլեկտրոնային հասցեն
9. Վերջին 5 տարիների գիտական հրապարակումները (առավելագույնը 10)

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆԱԽԱԳԾԻՆ ՄԱՍՆԱԿԻՑ ԿՈՆՍՈՐՑԻՈՒՄԻ ԽՄԲԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ[1]

1. Կոնսորցիումի մասնակից կազմակերպության լրիվ անվանումը (հայերեն, ռուսերեն, անգլերեն)
2. Հասցեն, էլեկտրոնային հասցեն, կայքէջը
3. Կոնսորցիումի ղեկավարի ազգանունը, անունը, հայրանունը (հայերեն, ռուսերեն և անգլերեն)
4. Ծննդյան թիվը
5. Կրթությունը (բուհ, մասնագիտություն)
6. Գիտական աստիճանը
7. Պաշտոնը
8. Հեռախոսը, էլեկտրոնային հասցեն
9. Վերջին 5 տարիների գիտական հրապարակումները (առավելագույնը 10)

[1] Լրացվում է յուրաքանչյուր կազմակերպության և ղեկավարի համար առանձին

Ձև 3

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆԱԽԱԳԾԻ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԿԱՏԱՐՈՂԻ ՄԱՍԻՆ[2]

1. Ազգանուն, անուն, հայրանուն (հայերեն, անգլերեն, ռուսերեն)
2. Ծննդյան տարեթիվն ու ծննդավայրը
3. Կրթությունը (բուհ, մասնագիտություն)
4. Գիտական աստիճանը
5. Վերջին թեզի վերնագիրը, մասնագիտական դասիչը, պաշտպանության տարեթիվը և վայրը
6. Աշխատանքի վայրը, պաշտոնը
7. Հեռախոսը (աշխատանքային, բջջային)
8. Էլեկտրոնային հասցեն
9. Վերջին 5 տարիների գիտական հրապարակումները (առավելագույնը 10)

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՍՆԱԿԻՑ ԿՈՆՍՈՐՑԻՈՒՄԻ ԽՄԲԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ԿԱՏԱՐՈՂԻ ՄԱՍԻՆ[2]

1. Ազգանուն, անուն, հայրանուն (հայերեն, անգլերեն, ռուսերեն)
2. Ծննդյան տարեթիվն
3. Կրթությունը (բուհ, մասնագիտություն)
4. Գիտական աստիճանը
5. Աշխատանքի վայրը, պաշտոնը
6. Հեռախոսը (աշխատանքային, բջջային)
7. Էլեկտրոնային հասցեն

[2] Լրացվում է յուրաքանչյուր կատարողի համար առանձին

Ձև 4

ՀԱՅՏԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՆԱԽԱՀԱՇԻՎ

Հայտի ծածկագիրը _____

1, ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆ (ներառյալ եկամտային հարկ, հազար դրամ)												
	2020թ. 6 ամիս			**2021թ. 12 ամիս**			**2022 թ. 12 ամիս**			**2023 թ. 6 ամիս**		
Ազգանուն, անուն, հայրանուն	Անվանում	Ամիսների քանակը	Դահանջվողգումարը	Անվանում	Ամիսների քանակը	Դահանջվող գումարը	Անվանում	Ամիսների քանակը	Դահանջվող գումարը	Անվանում	Ամիսների քանակը	Դահանջվող գումարը
1)												
2)												
3)												
4)												
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐԸ												

2, ԱՅԼ ԾԱԽՍԵՐ, այդ թվում				
1. ՍԱՐՔԵՐ, ՆՅՈՒԹԵՐ, ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ (թվարկել 150,0 հազար ՀՀ դրամը գերազանցող բոլոր ծախսերը, հիմնավորվել ֆինանսական նախահաշվի մեկնաբանության մեջ)	2020	2021	2022	2023
1)				
2)				
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐԸ				
2. ԳՈՐԾՈՒՂՈՒՄՆԵՐ (հիմնավորել ֆինանսական նախահաշվի մեկնաբանության մեջ)				
1) տեղական գործուղումների տրանսպորտային ծախսեր				
2) տեղական գործուղումների օրապահիկ				
3) տեղական գործուղումների գիշերավարձ				
4) օտարերկրյա գործուղումների տրանսպորտային ծախսեր				
5) օտարերկրյա գործուղումների օրապահիկ				
6) օտարերկրյա գործուղումների գիշերավարձ				
7) գործուղումների հետ կապված այլ ծախսեր (վիզա կամ այլ վճարումներ)				
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐԸ				
3, ՎԵՐԱԴԻՐ ԾԱԽՍԵՐ				
ՀԱՅՑՎՈՂ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐԸ				
ԱՅԼ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻՑ ՍՏԱՑՎՈՂ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ (ներկայացնել ֆինանսական նախահաշվի մեկնաբանության				
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՆԱԽԱՀԱՇՎԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ (հայերեն՝ մինչև 500 բառ				

Հայտի ղեկավար՝ _____ _____
(ստորագրություն) (ազգանուն, անուն, հայրանուն)

Կազմակերպության գլխավոր հաշվապահ՝ _____ _____
(ստորագրություն) (ազգանուն, անուն, հայրանուն)

Կ.Տ

Հավելված N 2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ
ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ

ՔԱՂԱՔԱՑԻ _____
(անուն հայրանուն)
_____ ից
(ազգանուն)
_____
(հասցե)
_____
(հեռախոս)

Դ Ի Մ Ո Ւ Մ

Խնդրում եմ ընդունել կից ներկայացվող հայտը՝ ՀՀ գիտության կոմիտեի և Գիտական հետազոտությունների աջակցության եվրասիական ասոցիացիայի հետ համատեղ անցկացվող գիտական հետազոտությունների բազմակողմ ծրագրերի աջակցության միջազգային մրցույթին մասնակցելու համար:

Կից ներկայացվող փաստաթղթերը՝

- Տիտղոսաթերթ,
- Նախահաշիվ,
- Խմբի մինչև 35 տարեկան մասնակցի (մասնակիցների) ասպիրանտ կամ մագիստրանտ հանդիսանալու դեպքում՝ համապատասխան տեղեկանքը(ները), վերջին դիպլոմի և անձնագրի պատճենները,
- Կազմակերպության գիտական (գիտատեխնիկական) խորհրդի որոշումը,
- Խմբում փոխկապակցված անձանց (ընտանիքի անդամներ՝ ծնող, երեխա, եղբայր, քույր, ամուսին) առկայության մասին տեղեկատվությունը՝ Խմբի ղեկավարի ստորագրությամբ:

Դիմող՝ _____ (_____)
(ստորագրություն) (անուն ազգանուն)

«____» _____ 20 ,,, թ.

Փորձագիտական եզրակացություն, հայտ _____

Ղեկավարի ազգանունը _____

Հարցաշարի յուրաքանչյուր հարցի պատասխանը տրվում է թվային գնահատականով, առավելագույնը 5 միավոր **(0,5 միավորի ճշտությամբ),** հետևյալ սանդղակով.

0	*Հարցի պատասխանը **բացակայում է** կամ այն չի կարող որոշվել տեղեկատվության բացակայության պատճառով:*
1	***Շատ վատ:*** *Պատասխանը ներկայացված է մակերեսորեն և խիստ անորոշ:*
2	***Վատ:*** *Հարցի պատասխանը բավարար չէ նրա վերաբերյալ ամբողջական կարծիք կազմելու համար:*
3	***Միջին:*** *Պատասխանը ընդհանուր առմամբ բավարարում է հարցի պահանջներին, բայց կան նաև զգալի թվով անհամապատասխանություններ, որոնք սակայն շտկելի են:*
4	***Լավ:*** *Հարցի պատասխանը առաջադրված պահանջներին համապատասխանում է որոշակի վերապահումներով:*
5	***Գերազանց:*** *Պատասխանը լիովին համապատասխանում է հարցի պահանջներին և թերություններն աննշան են:*

Հարցաշար

1.	**Նպատակներ**: Որքանո՞վ է հիմնարար առաջարկվող գիտական հետազոտությունը:	
2.	**Արդիականություն**: Որքանո՞վ է արդիական առաջարկվող հետազոտությունը:	
3.	**Նորույթ**: Որքանո՞վ է նոր ու հեռանկարային առաջարկվող հետազոտությունը:	
4.	**Իրագործելիություն:** Որքանո՞վ է իրատեսական հետազոտության նպատակներին հասնելը առաջարկվող ժամանակահատվածում:	
5.	**Ծրագիր:** Որքա՞ն հստակ է ձևակերպված գիտական ծրագիրը, և որքանո՞վ է ապահովված խմբերի իրական համագործակցությունը:	
6.	**Համապատասխանություն**: Որքանո՞վ է համապատասխանում գիտական ծրագիրը հետազոտության նպատակների իրականացմանը:	
7.	**Իրականացում**: Որքանո՞վ է իրատեսական առաջարկվող գիտական ծրագրի իրականացումը:	
8.	**Առնչություն այլ բնագավառների հետ:** Որքանո՞վ է գիտական ծրագիրը նպաստում տվյալ բնագավառին հարակից բնագավառների առաջընթացին:	
9.	**Նորարարական կարևորություն:** Որքանո՞վ է գիտական ծրագիրը նորարարական (գիտության հետագա զարգացում, տեխնոլոգիական արտադրանքների, սիստեմների և մեթոդների բարելավում, զգալի տնտեսական կամ հասարակական ազդեցություն):	
10.	**Իրականացման մեթոդներ:** Որքանո՞վ են առաջարկվող մեթոդները համապատասխանում գիտական ծրագրին:	
11.	**Իրականացման փուլեր:** Որքանո՞վ են համապատասխանում իրականացման փուլերը գիտական ծրագրին:	
12.	**Իրականացման փուլերի վերահսկելիություն:** Որքանո՞վ է իրատեսական գիտական ծրագրի փուլերի վերահսկելիությունը:	
13	**Երիտասարդ մասնագետներ:** Որքանո՞վ են համապատասխանում խմբում ընդգրկված երիտասարդ մասնագետների (մինչև 35 տարեկան) մասնագիտական ուղղվածությունը գիտական ծրագրի իրականացմանը:	
14.	**Տեխնիկական ապահովվածություն:** Որքանո՞վ է գիտական խումբն ապահովված տեխնիկական միջոցներով:	
15.	**Համագործակցություն:** Ի՞նչ մակարդակի վրա է գտնվում երկկողմ համագործակցությունը (վերջին 10 տարիներին համատեղ հրապարակումների առկայությունը):	
16.	**Արդյունքների տնօրինում:** Որքա՞ն հստակ է ձևակերպված հետազոտության արդյունքների տնօրինումը. արդյունքների օգտագործում և տարածում (հրապարակումներ, գիտաժողովներ և այլն), նորարարական կարողության օգտագործում (տեխնոլոգիական ներդրում, ցուցադրում, փորձնական նմուշ, նախատիպ և այլն), մտավոր սեփականության տնօրինում (արտոնագիր, հեղինակային իրավունք և այլն):	
17.	**Նախահաշիվ:** Որքանո՞վ է հատկացվող ֆինանսավորման ծավալը բավարար գիտական ծրագրի իրականացման համար:	
	Ընդհանուր գնահատական (17 գնահատականների գումարը)	

Փորձագետի մեկնաբանություններ

1.	Հետազոտության նպատակների մեկնաբանություն / 1-4 կետերը
2.	Նախագծի մեկնաբանություն /5-10 կետերը
3.	Նախագծի իրականացման մեկնաբանություն/11-17

Մասնագիտական փորձագիտական խոհրդի գնահատականը

1	Գիտական ծրագրի ղեկավար: Որքանո՞վ է համապատասխանում հայաստանյան կողմի ղեկավարի մասնագիտական որակավորումը գիտական ծրագրի իրականացմանը:	
2	Գիտական ծրագրի կատարողներ: Որքանո՞վ է համապատասխանում հայաստանյան կողմի կատարողների մասնագիտական որակավորումը գիտական ծրագրի իրականացմանը:	
3	Կոնսորցիում: Որքանո՞վ են համապատասխանում կոնսորցիումի ղեկավարների մասնագիտական որակավորումը գիտական ծրագրի իրականացմանը:	
	Ընդհանուր գնահատական (3 գնահատականների գումարը)	
	Հայտի վերջնական գնահատականը	

ՄԻՆՉԵՎ 3 ԱՆՑԱՆԿԱԼԻ ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ

№	ԱԶԳԱՆՈՒՆ, ԱՆՈՒՆ, ՀԱՅՐԱՆՈՒՆ
1.	
2.	
3.	

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ
ԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇԻ ՈՐՈՇՄԱՆ

1. Գիտական գործունեության արդյունավետության ցուցանիշը (այսուհետ՝ ԳԳԱՑ՝ E) որոշվում է ըստ հետևյալ բաղադրիչների՝

1) Գիտական ամսագրերի հրապարակումների: Հրապարակում գիտական ամսագրում՝ հոդված (Article) կամ ակնարկ (Review)՝ Web of Knowledge և Scopus միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններերի (այսուհետ՝ ՄԳՇ), ԲՈԿ ցանկերում ընդգրկված ամսագրում:

$$E_1 = \sum IF \frac{(1+C/10)^{1/3}}{N^{1/3}},$$

<u>Յուրաքանչյուր հոդվածի կամ ակնարկի համար</u>՝

IF՝ ամսագրի տվյալ տարվա ազդեցության գործակիցը (այսուհետ՝ ԱԳ)՝ ըստ «Institute for Scientific Information (ISI JCR)»-ի տվյալների,

N՝ ընդհանուր համահեղինակների /համաղեկավարների/ համամրցանակակիրների թվաքանակ,

C՝ հղումների քանակ՝ *առանց ինքնահղումների,*

0.2*-ից ցածր* ***IF****-ի դեպքում դրան տրվում է՝*

0.2՝ *ԱԳ ունեցող կամ ԱԳ չունեցող, բայց ՄԳՇ ցանկերում ընդգրկված ամսագրի դեպքում,*

0.15՝ *ԱԳ չունեցող, ՄԳՇ ցանկերում չընդգրկված, բայց ՀՀ կամ օտարերկրյա որևէ պետության ԲՈԿ-ի ցանկում ընդգրկված ամսագրի դեպքում:*

2) Մենագրությունների, կոլեկտիվ մենագրությունների, գիտամեթոդական ձեռնարկների, նյութերի կամ հոդվածների ժողովածուների հրապարակումների:

Մենագրություն, կոլեկտիվ մենագրություն, գիտամեթոդական ձեռնարկ, նյութերի կամ հոդվածների ժողովածու՝ գիտական կազմակերպության կամ բարձրագույն ուսումնական հաստատության գիտական խորհրդի երաշխավորություն ունեցող, որևէ մեկ գիտական թեմայի նվիրված հեղինակ(ներ)ի գիտական արդյունքներին վերաբերող (ընդգրկող), հետազոտողների (researchers) համար նախատեսված և ISBN ունեցող հրապարակում: Չեն գնահատվում բառարանները, կատալոգները, փաստաթղթերի ժողովածուները, դասագրքերը, ինչպես նաև ժողովածուների, գիտաժողովների նյութերի խմբագրումը և կազմումը:

$$E_2 = \begin{cases} \sum B \dfrac{P_{Sh} \cdot (1+C/10)^{1/3}}{N^{1/3}}, \\ \sum CA \dfrac{(1+C/10)^{1/3}}{N^{1/3}}, \end{cases}$$

<u>Յուրաքանչյուր մենագրության, կոլեկտիվ մենագրության կամ գիտամեթոդական ձեռնարկի մասի, նյութերի կամ հոդվածների ժողովածուի նյութի կամ հոդվածի համար</u>՝

B=0,25` *օտար լեզվով հրատարակված մենագրություն կամ կոլեկտիվ մենագրություն,*

B=0,20` *հայերեն լեզվով հրատարակված մենագրություն կամ կոլեկտիվ մենագրություն,*

B=0,15` *գիտամեթոդական ձեռնարկ կամ օտար լեզվով հրատարակված նյութերի ժողովածու,*

B=0,10` *հայերեն լեզվով հրատարակված նյութերի ժողովածու,*

CA=0,20` *օտար լեզվով հրատարակված հոդվածների ժողովածու,*

CA=0,10` *հայերեն լեզվով հրատարակված հոդվածների ժողովածու,*

P_{sh}` *ծավալ (տպագրական մամուլ, 16 էջ):*

3) Գիտաժողովների մասնակցության: Գիտաժողովների թեզիսները (Abstract) և նյութերում չընդգրկված ստենդային զեկույցները (Poster) չեն գնահատվում:

$$E_3 = \begin{cases} \sum T \dfrac{1}{N^{1/3}}, \\ \sum \mathrm{P} \dfrac{(1 + C/10)^{1/3}}{N^{1/3}}, \end{cases}$$

<u>Յուրաքանչյուր պլենար զեկույցի կամ գիտաժողովի նյութերում (Proceeding) հրապարակման համար՝</u>

T=1,00` *արտերկրում տեղի ունեցած գիտաժողովի պլենար զեկույց,*

T=0, 50` *ՀՀ-ում տեղի ունեցած գիտաժողովի պլենար զեկույց,*

P=0,15` *արտերկրում տեղի ունեցած գիտաժողովի նյութ,*

P=0,10` *ՀՀ-ում տեղի ունեցած գիտաժողովի նյութ:*